քիս ընդ բոլոր միաբանիցն Սրբոյ Էջմիածնի պանդխտացեալ, անհնարին իմն է մեզ զարդիս գնալ Երեւան՝ ի Կարբի և վերահասութեամբ գրել զորոշ ինչ տեղեկութիւն զկալուածոց մերոց, բայց յորժամ ողորմեսցի տէր Երուսաղէմի և այց ինչ մեզ արասցէ վտարանդեալս և յերկիրն հայրենեաց մերոց կրկին զմեզ ժողովեսցէ, յայնժամ Աստուծով զամենայն կալուածս մեր յականէ յանուանէ տեղեկացեալ ի գիր եմ արձանացուցանելոց հանդերձ որքանութեամբք, մեծութեամբք, լայնութեամբք և երկայնութեամբ նոցին, եթէ տէր ժամանակ տացէ երկար կենաց մերոց. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, յորում աղմկեալ էր աշխարհն մեր պէսպէս խռովութեամբք և տառապակրութեամբք ի բռնաւորէն Նադըր—շահի, որ է Թահմազ-ղուլի-խանն, հայրն մեր Ուղուրլու եւս փախստական լինի յերկիրն Վրաց ի Տփխիս հանդերձ Գասպար, Մելքոն և Բաղդասար եղբարբք իւրովք հինգ ամօք յառաջ քան զմահ հօրն իւրոյ Մաղաքայ յաւուրս մանկաժողով հրամանին Նադրի և բնակեալ անդ ամս քսան ամուսնանայ ընդ դստեր Զաքարիայ Հեղինար անուն և ծնանի որդիս և դստերս անդանօր. և ի վերադառնալն ի Տփխեաց կրկին յԵրեւան յետ իբր քսան ամաց՝ ծնանիմ և ես, որ եմ իբր խե. ամաց. Այժմ զօրացեալ հօր մերում յանդ յԵրեւան բարի անուամբ և յաջողութեամբ եղև երևելի յոյժ՝ ի մէջ ազգի մերում և բնակչաց երկրին յանուն կոչեցաք մեք յետոյ Ուղուրլեանք, որպէս և մինչև ցայժմ, ի բոլոր բնակչաց երկրին ազգ մեր և ծնունդք կոչին և անուանին Ուղուրլեանք. զայսքանս առ այժմ բաւ համարեալ՝ կնքեմ զբանս:

Ց. Վ. Տէր Մովսիսեան

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## (ԹՈՒՂԹ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԳՈՇՆ ԿՈՉԻՒՐ.)

(Շարունակութիւն) *

Վասն այն և Եսու Նաւեայ [1] Նախ[2] անցուցել[3] ընդ Յորդանան զժողովուրդն ի խորհուրդ մկրտութեանն [4], և ապա թլփատէր ի Գաղգաղիա [5]. և Նախ Մովսէս յամպն և ի ծովն մկրտել էր [6] *. Ու այլ զհաց [7] պատարագին բաղարջ հրամանեցին [8] առաքեալքն, վասն զի Քրիստոս զբաղարջն էառ և ասաց. Այս է մարմին իմ. զայս արարէք առ իմ յիշատակ [9] **. և աւր բաղարջակերաց [10] էր: Ու արդ որ խմորով վարեն՝ լուծիչ են կտակին Տեառն: զի բաղարջն աւրինակ էր [11] անապական մարմնոյն Քրիստոսի. զի խմոր թէպետ և ի նոյն բնութենէ հացին է, սակայն բազմաւրեայ լինելով. քացախել [12]՝ նշանակ ապականութեան է. զի մարմինն [13] Քրիստոսի բնութեամբ մեր է, բայց ծննդեամբ անախտ է և անապական. Բաւական է վասն խմորոյ ասացեալքն յԱռաքելոյն [14] և յԱստուածաբանէ. Ու ի Պետրոսէ առաքելոյ [15] հռոմեցւոցն [16] բաղարջիւ աւանդեցաւ պատարագել. և Լուսաւորիչն

* Տես Արարատ 1900 թ. համար ԺԱ. եր. 562:
1. Նաւեան.
2. Օ. նախ.
3. անցուցեալ.
4. մկրտութեան.
5. եւ. զժողովուրդն ի Գաղգաղայ Բ. ի Գաղգաղայ.
6. մկրտէր.
7. Այլ եւ ի հաց.
8. բաղարջ հրամայեցին.
9. առ իմոյ յիշատակի.
10. բաղարջակերաց.
11. է.
12. քացախեալ.
13. Ա. մարմին.
14. յԱռաքելոյ.
15. յառաքելոյ.
16. Ա. Հռոմայեցւոցն. Բ. Հռոմայեցոցն.
* Ա. Կորնթ. ԺԱ. 23:
** Մատթ. ԻԶ. 26 Մարկ. ԺԴ. 22 Ղուկ. ԻԲ. 19:

մեր Գրիգորիոս ի Հռոմանցոց [1] առեալ աւանդեաց ի Հայս, Լ.Զ. ազգն Հռովմայեցւոցն ...[2]. ազգն Ճենաց քաղաքքն պատարագեն: Ուսանիմք և ի Կեղեստինոսէ և . . . . . . [3] Հակաճառութենէ զիրս խմորոյն, Եւ Յոբնաղ . . . [4] երկու բնութեան [5] դաւանող է, ըստ ժողովոյն Քաղկեդոնի, սակայն յիւր պար . . . . . [6] յեթներորդ [7] ճառին գրեալ է[8], թէ չէ պարտ խմոր և աղ դնել ի հաց պատարագին [9]. բայց Լեոնին [10] հաստատել [11] ժողովն Քաղկեդ ...[12], զոր ասէ թէ պարտ է դնել խմոր. զի մանուկն աճէր՝ ասէ աւետարանիչն, Որք անգիտանան, զի Աստուած էր Բանն [13] որ առ [14] մարմին, և ամենայն ինչ նմա հնարաւոր է. զի որպէս առանց սերման էր յղանալն, և անապական աճումն [15]: Իսկ ջուրն պատճառ ունի ընդ արեանըն [16] ելանելն ի կողէն Տեառն, զոր բաժանեն [17] խառնեն յոյնք և այլք, Բայց գիտելի է, զի Տէր [18] զջուրն [19] մկրտութեանն [20] անուանեաց, ասելով որդւոցն Զեբեթեա [21]. Կարէ՞ք [22] ըմպել զբաժակն իմ և զմկրտութիւնն իմ մկրտել *. զոր Հայք ամենայն և Եփրեմ ի խորհուրդ առնուն մկրտութեան [23], թէպէտ և ջուրն զմահն ցուցանէր և արիւն զԱստուածութիւնն զկենդանի[24]. Ահա յայտնէ [25] երկու բնութիւնն միութեամբ. զի թէ ոչ էր միացեալ Աստուածութիւնն, միայն ջուր ելանէր, և ոչ արիւնն ընդ նմին [26]. որպէս ի նաւ . . . . .

. . [1] մարմնոյն էր, և խառնեալ . . . . . խաղացուցանելն [2] միացեալ աստուածութեանն, Այդ [3] ցոյց և որ ինչ նման դոցին էր ... [4] բնութեանն է, բայց հանդերձ բա ... [5] միութեամբ, ըստ որում ասաց. Եւ ոչ ոք ել յերկինս ..... [6] յերկնից որդի մարդոյ, որ էն յերկինս *. Արդ, ոչ զմարմնոյն [7] ասէ յերկնից բերել ...... [8] ի մարմնի էր՝ ասաց զնոյն լինել յերկ . . . . . . [9] զի ոչ ի Հաւրէ բաժանեցաւ ..... [10] և ոչ ի մարմնոյ՝ յերկինս գնալով. ամենայն ուստեք զմիութիւն տեսանեմք և ոչ չարայարութիւն ... [11] տոմարին [12] Լեոնի և ժողովոյն Քաղկեդոնի, Յովհաննէս [13] աւետարանիչն [14] գրէ. Արիւն Որդւոյն Աստուծոյ սրբէ զմեզ յամենայն մեղաց **. զի թէ բաժանես զաստուածութիւնն ի մարմնոյն՝ արիւն մարդոյ սրբել ոչ կարէ. Աստուածարանն ասէ. Արիւն և չարչարանք ըսելով մի ի վայր անկցիս անաստուածարար. անաստուածութիւն ասէ զարիւնն լոկ մարդոյ համարել [15], Արդ, տուաւ մեզ ջուրն ի մկրտութիւն, և արիւնն ի հաղորդութիւն, զոր և Քրիստոս ի բերոյ որթոյ ասաց ըմպել [16], և որթն, որպէս մեկնէ Յոհան Ոսկեբերանն [17], գինի և ջուր բերէ [18], և յանդիմանէ ասելով. Ո՞ւր են որ [19] ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր առնուն, Թէպետ յոյն լոկ ջրամատուցուցեն [20], բայց ի կիր առնուլն զխառնուածն ցուցանէ, Ահա յայտ է, թէ յաւուրս նորա չէր կարգ ջրոյն, որպէս ոչ տանել[21] ի[22] դեկտեմբերի, այլ ըստ կանոնաց ի զ. [23] յունվարի, զոր և գրել է [24] Սոկրա-

---

1. Ա. ի Հռովմեցւոց Բ. ի Հռոոմայեցոց, եւլն.
2. եւ.
3. Ա. ի Պարսումայ Բ. ի Պարսումա.
4. բեպէս եւ.
5. բնութիւնն.
6. պարապումն.
7. Է-րդ.
8. գրեալ է.
9. Ա. պատարագի.
10. Բ. զԼեւոնին.
11. հաստատեն.
12. Ա. Քաղկեդոնին. Բ. Քաղկեդոնի.
13. մարմինն.
14. էառ.
15. էր անուն.
16. արեան.
17. ի բաժակին.
18. Տէրն.
19. զջուր կողին.
20. Ա. ի մկրտութիւն Բ. մկրտութեան.
21. Զեբեդեայ.
22. Կարէ՞ք.
23. մկրտութեանն.
24. զկենդանի.
25. յայտ է.
26. ընդ նմա.

* Մատ. Ի. 22. Մարկ. Ժ. 39:

1. ի նմին ի նոյն շինելն.
2. խառնել զծովն եւ խաղաղացուցանել.
3. Արդ.
4. բ.
5. բանին.
6. երկ ոչ որ էին.
7. Ա. ըստ մարմնոյն.
8. բերել. բէպէս.
9. յերկինս եւ ի մարմնի.
10. ի մարմին շինելով.
11. ըստ չարայարութիւն ըստ.
12. սոմարին.
13. Ա. Յոհաննէս. Բ. Յոհաննէս.
14. աւետարանիչ.
15. Ա. համարէ. Բ. համարեայ.
16. ըմպել.
17. Բ. Ոսկեբերանն.
18. Ա. եւ ոչ ջուր բերէ. Բ. գինի եւ ոչ բերէ.
19. Օ. ուր.
20. Թէպէտ եւ յոյնս լոկ ջրամատուցած ասեն.
21. տանել.
22. Ա. Օ. ի.
23. ըստ կանոնաց ի վերջն.
24. գրէ.

* Յովհ. Գ. 13.

** Յովհ. Ա. 7.

տես՝ զմերժեալն[1] Յովհաննու յեկեղեցւոյն մինչ տանէր զյայտնութիւնն եւ զծնունդն. որպէս Աստուածաբան ի ծննդեան ճառին զծնունդն յայտնութիւն անուանէ ասելով[2] .....[3] այժմ Աստուծոյ յայտնութեանս տաւն է, զի երևեցաւ ...[4] ծննդեամբ ի կուսէ: Զնոյն Բարսեղ անուանէ ի ծննդեան ճառին ասելով. Անուն դիցուք տաւնիս Աստուծոյ յայտնութեան[5], եւ մարմնոյն աստուածութեամբն միանալոյն է[6] յայտնութիւնն[7]. Այլ այնոքիկ, որ աղ եւ ձէթ[14] յաւելուն՝ զհոգւոյն տալ զաւրինակ եւ զաստուածութեան[8], եւ խմորոյն՝ զանձման[9] մարմնոյն,—եւ այս ... անմանն[10] ատյ կարծիս յատուկ ունել .....[11], այլ ասել զաստուածութիւնն եւ այլ զմարդկութիւնն. այլ զի պարզ աստուածութիւն[12] միացաւ՝ բիծ եւ արատ ոչ ունելով, եւ հաց պարզ լինել խմորեալն ոչ կարէ, այլ ունի փքացումն նշանակ ամպարտաւանութեանն[13], իսկ աղն եւ ձէթն[14] համեմելոյ[15] է աւրինակ, եւ մարդկային հնարիցն ոչ էր կարաւտ տէրունական մարմինն. զի աղն բանի աւետարանին է աւրինակ եւ ձէթն[16] խորհուրդ մկրտութեանն. ի պատարագն ոչինչ յարի, զի զանձեալն[17] մարմնոյն տան միայն՝ աստուածութեան անհնար ասեն զանձելն, այլ ճշմարիտ միութեանն տան, զի եւ առ մեզ մարմինն անձէ. սակայն հոգոյն ներգործութեամբ անձէր մարմինն Տեառն, Բանին ներգործութեամբ[18] անապական անապականութեամբ անձել, ըստ աւրինակի մանանային.

Իսկ վիրք զողջոյն ամի լուծանեն զչորեքշաբաթի[19] եւ զուրբաթ, եւ զկնի յարութեանն պահեն, պատճառելով թէ Ծ. աւր պահել[20] եւ Ծ. աւր ուտել՝ այդ աստէն հատուցանել է. ոչ յիշեն զասելն Տեառն. Յորժամ վերասցի Փեսայն, ապա պահիցեն[21]. զայն պահեն, որ ոչ է ըստ կանոնաց. Որպէս ասացէք զակիզըն[1] աւուրն յերեկոյն[2] զնեն, եւ զչորեքշաբաթն եւ զուրբաթն[3] լուծանեն, հրէաբար թուելով, մոռացեալ[4] զգրեալն[5] ի Մովսիսէ. Ասաց Աստուած, եղիցի լոյս՝ սկիզբն աւուր.[6]

Զկրճատեալ զանասունն աւրէնքն ի պատարագն ոչ ընդունէր, զի՞րդ ի քահանայութիւն ընդունելի իցէ, ըստ սովորութեանն յունաց. եւ ոչ ըստ բնութեան պատահեալսն աւրէնքն ընկալաւ, զի՞րդ ի մարդկանէ զեղեալսն ընկալցուք. Զի Որոգինէս ժպիրհ անուանեցաւ եւ Արարչին հակառակ լինել ցուցաւ, զի հարկաւ առաքինութիւնն եւ բռնադատեալն անընդունելի է. զի ըստ բնութեանն եւ բազում կենդանիք[7] ողջախոհք են, որպէս տատրակ եւ արագիլ, եւ այլք. թէ խոտան լինել ըստ աւրինացն կարծէ ոք՝ ցուցցէ ըստ աւետարանիս, թէ ոչ ընկալաւ ի սրբոց կամ ի ժողովոց. զի ի բազում ժողովս նզովս[8] եդեալ է, եւ որք արարին առաքինութիւն կարծելով՝ որոշեցան, որպէս այնոքիկ, որք յԱղեքսանդրիայն արարին.

Տես որքան է մարմնաւոր[9] բաժանելս ի Տէր հաւատացելոց, զի հռովմայեցիք[10] բազմաւրեայ նշխարով[11] պատարագ մատուցանեն, մնացածին պատճառաւ, զի կանոնք առաքելոցն ջերմ[12] հրամաէ զհաց պատարագին հանել ի սեղանն. Նաեւ աւրէնք[13] զհաց երեսացն յաւուրն հրամայէ[14] դնել եւ առնուլ, որ են[15] նշանակ Քրիստոսի միում աւուր պատարագելոյն ի վերայ խաչին.

Այլ հռովմայեցւոցն[16] անկին լինել քահանայ աշխարհի՝ ընդդէմ է առաքելական կանոնաց եւ բազում ունի վնասու պատճառս[17], զի անխտիր վարեն շնութեամբ եւ չար խառնակութեամբ, զոր եւ մերժէ կանոնք եկեղեցւոյ սրբոյ. զի քաւիչ թարգմանի քահանայն, զի թէ ինքն մեղուցեալ է՝ զի՞րդ քաւէ զմեղս բազմաց, զի ոչ միայն չէ քահանայ, նաեւ ոչ հաղորդի արժանի է ընդ աշխարհականս. Զի թէպէտ եւ զմարդասիրութիւն

---

1. զմերժելն.
2. Ա. եւ զյայտնութիւնն անուանելով. Բ. յայտնութեան անուանելով.
3. բայց.
4. Աստուած մարդ.
5. յայտնութիւն.
6. Ա. միանալութիւն.
7. յայտնութիւն.
8. Ա. զաստուածութիւնն. Բ. զաստուածութեանն.
9. զանձման.
10. բաժանումն.
11. աստուածութեանն.
12. աստուածութիւնն.
13. ամբարտաւանութեան.
14. ձէթն.
15. համեմելոյ.
16. զձէթն.
17. զանձն.
18. Օ. անձէր—ներգործութեամբ.
19. զչորեքշաբաթ.
20. Ա. Օ. Ծ. աւր ուտել.
21. պահեսցեն.

---

1. զսկիզբն.
2. Ա. երեկոյին.
3. եւ զչորեքշաբաթ եւ զուրբաթ.
4. Ա. Օ. մոռացեալ.
5. զգրեալսն.
6. սկիզբն աւուրն.
7. կենդանիք.
8. նզով.
9. մասնաւոր.
10. հռովմայեցիք.
11. նշխարաւ.
12. ջերմն.
13. օրէնքն.
14. հրամայէր.
15. էր.
16. հռովմայեցիք.
17. Ա. վնասս պատճառ.

պատճառէ և համարձակի [1], զի՞րդ և զիրաւունս մոռանայ և ընդէ՞ր ոչ լոէ գքարոզ պատարագին, թէ մի [2] յապաշխարողաց. Թէ [3] աշխարհականաց ոչ տայ թոյլ հաղորդել, որոց պէտք են ապաշխարութեան՝ ո՞րպէս անարժան քահանա քահանել [4] իշխէ. քանզի կանոնքն [5] ..... [6] թէ զորս արժան է կոչելոյ քահանայութեան [7] և զոր ոչ, և որ զընտրեալն քահանայ ընդունի և զպատարագ նոցա՝ զԱստուած բարկացանէ [8] աշխարհի, քան թէ հաշտեցուցանէ. Եւ ոչ եթ կանոնք մկրտել և ոչ սարկաւագի պատարագ մատուցանել [9]՝ զի՞րդ լոկ աշխարհականի արժան է հաղորդեցուցանել զհիւանդ, որպէս առնեն բազումք յազգաց. զի յոր կոչումն կոչեցել է՝ արժան է նմին [10] կալ ըստ առաքելոցն [11] *. Կանոնք [12] ի հասարակաց տան ոչ հրամանեն պատարագել, բայց միայն ըստ վտանգի. զի՞րդ ի փողոցս և ի հրապարակս, ուր ոչ է կանգնել սեղան ըստ կանոնաց, և ոչ խնկարկութիւն, և ոչ լուսաւորութիւն, և անպատրաստ և անարժան հաղորդեն. զի որպէս արհամարհանաւք շինեցաւ եկեղեցին, քեր ազատ խաղ՝ նոյնպէս հաղորդեն քամահանաւք։ Զվրանս [13] վասն զաւրաց թոյլ ետ կանոնքն [14], այլ զաւրէն բազորսաց առնել խուճակ, մանաւանդ ուր հնար գոյ եկեղեցի լինել՝ յո՞ր կանոնաց է. յայտ [15] արհամարհութենէ [16] լինել, թէպէտ և այլ ազգ ինչ պատճառեն. Նոյնպէս և ազգ [17] զպահս ունին հեշտութեամբ և արհամարհանաւք. զձուկն և զձայթ [18] և զգինի պահոյ անուանեն. Կանոնք [19] առաքելոցն ի շաբաթու [20] և ի կիրակէի հրամայէ լուծանել զպահս, որում և պատարագեալն է [21], այլ չեն յայտ արարել զպա-

1. համարձակի.
2. մի որ (Օ. թէ).
3. եւ թէ.
4. քահանայ քահանայել.
5. կանոնք.
6. ցուցեալ է.
7. ի քահանայութիւն.
8. բարկացուցանէ.
9. մկրտել սարկաւագի, եւ ոչ մատուցանել պատարագ.
10. արժան կին.
11. ըստ առաքելոյ.
12. Ա. Կանոնք.
13. զվրան.
14. կանոնք.
15. յայտ է.
16. յարհամարհութենէ.
17. Օ. ազգ.
18. զձուկն եւ զձէթ.
19. Ա. Կանոնք.
20. Ա. ի շաբաթու.
21. յորում եւ պատարագելն է.
* Ա. Կորնթ. Է. 20. Եփես. Դ. 1:

հոց և զտաւնից [1] կերակրոց. յայտ է զի և զմիս միայն արգելու ուտել [2], զի զատկին հրամանէ զենուլ գառն [3]. ապա և թան և պանիր և իւղ և ձուկն և ձէթ և գինի ըստ հրամանի նոցա տաւնի է, զոր բազում ազգ պահոց արարին։ Այլ ամենայն ազգ [4] չէ պարտ ուտել ի գրոց, և թէ ոք պատճառէ զկանոնք, թէ ըստ կարի պահք հրամանեցաւ, որպէս պատմէ Սոկրատ՝ զկամաւոր պահոց ասէ, ոչ ըստ կարգելոց ի պահս [5] ըստ կանոնաց. Զի ի կանոնաց առաքելոց չորեքշաբաթ և ուրբաթ ի պահս գրել է. եթէ յամենայն աւուր [6] ուտէ ոք և ըմպէ՝ ցուցցէ թէ զո՞ր պահէ. զի զատ ի մոյ գիրք վկայութեամբ զամէն միասին յուտել և յըմպել և ի պահել. առաքել մարմին ասէ, և վիրք ջուր։

Զխաչ և եկեղեցի ոչ աւրհնեն վիրք, զի կանոնք զսեղանն [7] միայն յիշէ աւրհնել. բայց արդ տեսանեմք, զի յայլ խաչէ մասն դնեն, և այն նոյն է, զի և ոչ այն է աւրհնել. զի թէ այդպէս է՝ քահանայ զի աւծեալ է, զորդին չէ արժան աւծանել, և հայրն մկրտել է՝ զորդին չէ պարտ մկրտել. արդ. կամ չէ ի դէպ դնել, կամ աւրհնելոյ [8] դնել, կամ աւրհնել և աւծել [9], զոր կանոնք յիշեն զաւծելն. Եւ թէ վասն այն չաւրհնեն, թէ Քրիստոսիւ աւրհնեցաւ, և ջուրն Յորդանանու Քրիստոսիւ աւրհնեցաւ [10], ընդէ՞ր զջուրն աւրհնեն, և մեռոնիւ [11] որ ոչ երկրպագի, և զխաչ զերկրպագելի ոչ աւրհնեն և ոչ աւծանեն. զի այդ այնոցիկ է, որ ոչ խոստովանին ի խաչին զաստուածութիւնն. Եւ թէ զեկեղեցի վասն այն չաւծանեն, զի իբր [12] ի տուն ժողովին յաղաւթս, բայց եկեղեցի հաւատացելոց է աւրինակ, և աւծանին Քրիստոնեայք, զոր և արժան է աւծանել զեկեղեցի, որպէս հայք, և պատուել վասն աւծմանն և չտոնել .... [13]. Այլ հաւատացել [14] ի Քրիստոս երկիր ոչ պագանել միմեանց խաչի և եկեղեցոյ՝ յորժամ [15] հակառակ է Աստուծոյ. զի յանուն Քրիստոսի կանգնեն ամենայն ազգ. զՔրիստոս անպատուէ, որ զխաչ և զե-

1. տօնից.
2. արգելու լուծել.
3. գառնն.
4. յամենայն աւուր.
5. զպահս.
6. օր.
7. զսեղան.
8. Բ. յորհնելոյ
9. օծանել.
10. Օ. եւ ջուրն—աւրհնեցաւ.
11. Ա. մեռօնաւ. Բ. մեռոնաւ (օ. եւ).
12. իբրեւ.
13. օրէւան ի նմա.
14. հաւատացելոց.
15. յոյժ.

կեղեցի անպատուէ և իբրև ղանհաւատ դատապարտէ [1], Զի որ պատճառէ զմեռոն[2] հայոց անկատար լինել, և [3] վասն այն անպատուէ՝ յոյժ ստութիւն ունի [4], և զինքեանց մեռոն [5] պատուեն յոյժ, թէ պալասանի ձէթ և այլ անուշահոտ խունկ խառն է [6]. և կանոնք ոչ տա խառնուած առնել մեռոնի[7], որպէս ի հաց պատարագին [8], և ի բաժակն ջուր, և ոչ է գրել թէ հարկաւոր է ձիթապտղոյ ձայթ աւրհնել [9]՝ ըստ գաւառաց զինչ պատահի ձէթ. ընդունելի է, և թէ շուշմանի [10] և թէ այլ ազգ. Եւ թէ Մովսէսի հրամայեաց Աստուած զձիթապըտուղ խակակուտ՝ ըստ [11] պատահելոյ գաւառին էր [12] և այն. այլ որպէս զհաց պատարագին աւրհնութիւն առնէ մարմինն [13] Քրիստոսի՝ նոյնպէս ձէթն աւրհնութիւն առնէ հոգոյն նշանակ [14]. զի Հոգին սուրբ է, որ կատարէ զաւրհնութիւնն, և յայտ անուշահոտ լինելին է [15], թէ պատարագն և թէ մեռոնն. Եւ թէ զաւրինացն [16] ասիցէ ոք, զի չորք խունկք անուշահոտ խառնեցան ի յիւղն [17] աւծութեան, զի աւրինակին այն վայելէր, բայց ճշմարտութեանս չէ ինչ խառնուածքն պէտք. զի ամենայն ինչ անմարմնաւոր էր [18] և ստս հոգևոր. Իսկ կենդանոյն[19] առնել ժամ՝ գիտեմք զի վասն[20] այնորիկ մեռաւ և յարեաւ, զի կենդանեաց և մեռելոց [21] տիրեսցէ,—ընկալեալ եղև .... [22] յեկեղեցի, այլ զի պատճառել և ծուլութիւն [23], և յաճախելոյ ի հեշտութիւնս, և վասն այն անընդունելի եղև ի հայոց. Եւ Տէր Յիսուս զպատարագն յիշատակ [24] անուանեաց, և յիշատակ մահու լինի

1. դատապարտի.
2. Ա. զմեռօն.
3. Ա. Օ. եւ.
4. ունին.
5. զմեռոնն.
6. անուշահոտի խունկ խառնել է.
7. Ա. ի մեռոնն. Բ. ի մեռոն.
8. Ա. ասուր պատարագին.
9. ի ձիթապտղոյ օրհնել ձէթ.
10. թէ շուշմայի (օ. եւ).
11. զըստ.
12. Օ. էր.
13. օրհնութիւնն առնէ մարմին.
14. զձերն օրհնութիւնն առնէ նշանակ հոգւոյն.
15. Ա. լինելոյն. Բ. լինելոյն է.
16. Ա. Օ. (տեղը մաշուր է թողած). Բ.—նացն.
17. յիւղն.
18. Ա. անդր մարմնաւոր է. Բ. անդ մարմնաւոր էր.
19. Ա. կենդանւոյն.
20. Ա. վասն զի.
21. Ա. օ.
22. այդ.
23. պատճառ եղեւ ծուլութեան.
24. իւր յիշատակ.

և անուանի. և առաքեալն Փիլիպպոս [1] յետ մահուն պատուիրէր Բարթողիմէոսի [2] մատուցանել պատարագ, զի մի զոր շինէ ոք՝ զնոյն և քակէ. Բարի է յետ մահուն լինել պատարագին, զի ագահելոյ [3] պատճառ է քահանայից և վաճառաշահոյ [4], զի յայն ապաստանել [5] ոչ հատանի ի մեղաց. Ապա թէ սիրէ ոք կենդանոյն ժամ առնել՝ զգուշանալ պարտի ի մեղաց. իբրև զմեռեալ, և զի հասարակ փրկագործութիւն եղև՝ հասարակ պարտի պատարագին լինել. բայց զի ըստ գոյին զանազանի ընձառողացն [6] շատ համարեալն[7] և սակաւն, զի[8] մի քահանայք հեղգասցեն՝ աւուրբք թուեցաւ. Եւ զի կանոնք առաքելոյն[9] Փիլիպպոսի զքառասունս [10] հրամայէ՝ արժան է և թուելին լինել և հասարակն, ըստ ասացելոյ պատճառին.

Իսկ հռոմայեցիք, զի բազում կանայս առնեն որքան ի [11], մոլորեալք յառաքելոց [12] բանն, զոր Քրիստոս ասէ և յաւրէնսն, նոքա ասեն կարծեւք յայր և ի կին զասելն. Ապա թէ մեռանի այրն՝ չհամարել շնութիւն [13] լինիցի [14] առն այլում *. այլ ինչ պատճառ ոչ թողուն. Այլ կանոնք առաքելոցն [15] ոչ ընդունին, յասելն երրորդին, աւրէնքն չեն դատուր, այսինքն ձեռնտու. զինքեանց կանոնս աւրէնս անուանէ. Եւ Պաւղոս երկրորդին հաղիւ տայ թոյլ ասելով. Ապա թէ չունին ժոյժ՝ ամուսնասցին. և զերկրորդ ամուսնութիւնն ապաշխարութեամբ սահմանէ կանոնք. Այլ զկերակուրս[16] աւրհնել և կամ պղծել է[17] կանոնք. զջրհորս ոչ պղծէ վասն անհնարութեան, բայց զայլ ինչ պղծեն և ագահութիւն համարին. բայց հաւատովք սրբի ըստ առաքելոյն, զոր վասն խոզենոյն ասացել է: Այլ կրաւնաւորք հայոց զի ուտեն միս, և հռոմայեցիքն [18] զմիս խոզենի [19] եւս՝ կանոնական է և այն, զի զուտելն ընդունի և զչուտելն, բայց պատճառ ունի կանոնք զոմանց պիղծ համարել միս [20], զոր

1. Փիլիպպոս.
2. Բարդուղիմոսի.
3. ագելոյ.
4. վաճառաշահելոյ.
5. ապաստան.
6. ընծայօղացն.
7. շատն համարելն.
8. եւ զի.
9. առաքելոցն.
10. զքառասուեան.
11. որքան մեռանի.
12. յառաքելոյ.
13. չհամարեալ շուն.
14. երէ լինիցի.
15. առաքելոյն.
16. կերակուր.
17. ցուցեալ է.
18. հռոմայեցիս.
19. խոզի.
20. զմիս.

* Հռոմ. Ժ. 2.

նզովէ և հրամայէ ուտել, և բանադրէ որ զբանճար մտոտ [1] խոռէ. բայց այնքան խորշին յոյնք և վիրք, որ գՑեառն ուտելն ի վերնատանն ըստ ուրինացն զգաւն [2] ձուկն նկարագրեն. Արդ, որպէս խոտելի է ուտելն, խոտելի է և այնքան չուտելն խղճիւ. գովելի է չուտելն, զի անդէպ է կրաւնաւորի [3], բայց պարսաւի խղճիւ և պիղծ կարծեւք ուտելն. իսկ իւրաքանչիւր [4] աւուր ուտելն [5] ձուկն և ըմպել գինի՝ ամբաստանի [6] յաւրինաց և ի կանոնաց, զի և ոչ մի աւր պահոց առ նոսա գտանի: նաև ի բազմաց սակաւ գտանի ի հայոց կրաւորաց [7] մսի [8] կերող՝ համարձակեալ ի կանոնաց. Այլ ոչ տանել սարկաւագ և դպիր, և ոչ բացաւ գլխով և հանդերձիւ եկեղեցոյ պատարագել՝ այդոցիկ խափանումն չէ յաղանդոյ, այլ յաւերմանէ եկեղեցեաց, և ուր կարն է շրջառաւք [9] և հանդերձիւք պատարագեն և ի քահանից [10] կարգեն սարկաւագ և դպիր, զի ի խակ մանկունս չհամարձակին զահացին խորհուրդն պատարագի [11]. Այլ զի կրաւնաւորք հերս ոչ ունին, և վասն այն ոչ բանան զգլուխն [12], և աշխարհի քահանայք բացաւ գլխով պատարագեն և աղաւթեն. Իսկ ամբաստանելն թէ զպատկերս սրբոց [13] ոչ ընդունին [14] հայք, և կարի տաւել ընդունիմք, զի առաջին պարգեւ [15] ի Քրիստոսէ իւրն [16] տուաւ պատկեր հայոց թագաւորին Աբգարու, և զառաքելոցն ունէր զպատկերն [17] սուրբն Սեղբեստրոս, և ամենայն սուրբք ընկալան. Բայց եղև երբեմն հակառակութիւն ի յոյնս, թէ նմանութիւն է կռոց, և ոչ ընկան [18] ի թագաւորաց, այլ և այրէին [19] ևս, մինչ նշանք եղև՝ Աստուածածնին [20] պատկերն ի հրոյն [21] արտաքս անկաւ, և դարձեալ տեսիլ ցուցաւ [1], և այս ընկան [2], նաև Յուլիանոս ամպարիշտն [3] ընդ իւր պատկերին և զատանային [4] նկարեաց և ի հայս առաքեաց՝ դնել յարքունական յեկեղեցին, զոր առեալ Յուսկանն և Դանիէլ [5] քահանայ կոխեաց, և վասն այն սպանաւ ի Տիրանայ. Բայց զի կարի բազմացուցին, և անարգեցաւ սրբոցն պատկերքն ընդ այլսն [6]. Զի որպէս հայք զխաչ անարգեցին, արհամարհանաւք յամենայն տեղիս կանգնելով՝ նոյնպէս յոյնք և վիրք զպատկերս. զի զոր գիտեմք ընդունիմք և պատուեմք, զի յիշեցուցիչ է, որպէս պատմութիւնն վարուց սրբոցն, բայց զի այլք աղէտք զպաշտելին [7] կարծեն, վասն այն և ոչ փութան [8] առնել հայք. այլ իմաստունք զարարեալն ոչ անպատուեն:

Եւ վասն առաջաւորաց [9] պահոցն առաւել զայթակղին յոյնք և վիրք ի մեզ, և յիշատակ [10] տաւնի սրբոյն Սարգսի անդ պատահեաց, և կարծի այն պահք նմա լինել, և անգիտանան զի պատմութիւն նորա յասորոց է. զի ի պարսս նա վկաեց [11], և անտեղեակ են պատմութեանն [12]. և այն առաջին պահք է [13], զոր կարգեալ է [14] սուրբ Գրիգոր ի [15] բժշկել զՏրդատ թագաւոր, որպէս պատմէ Ագաթանգեղ [16], այր հոռոմեցի և ոչ հայ, և Զենոբ ասորի եպիսկոպոս, աշակերտ սրբոյն Գրիգորի՝ զնոյն գրէ յիւրում պատմութեանն, և յաւելու ի պատմեալն, թէ և Ն. աւր պահք Մեծին Կոստանդիանոսի կարգեցաւ ի բժշկեալ [17] զնա, և վասն այն առաջաւոր անուանի, զի առաջին պահք այն եղաւ ի հայս. և թէ զայլ պահսն [18] յիշեմք, վասն աւրինակի միայն՝ զնինուէացւոցն [19] և զայլոց. Բայց մանիքեցիք, թեպետ և ազգաւ չեն ի հայոց, այլ զի ի հայս բնակել են և զհայոց ունին զլեզու [20], և վասն շահի երթան ի յոյնս և առեն

---

1. զմտոց բանճար.
2. Օ. ըստ ուրիշնացն զգաւն.
3. Օ. գովելի է — կրօնաւոր(ներ)ի. Ա. փոխարէնը՝ եւ պիղծ.
4. յիւրաքանչիւր.
5. ուտել.
6. ամբաստանի.
7. կրօնաւոր.
8. մսոյ.
9. շուրջառօք.
10. ի քահանայից.
11. չհամարձակին զահացին խորհուրդ պատարագին.
12. զլուխս.
13. սրբոցն.
14. ոչ ընդունին.
15. պարգեւ.
16. Ա. իւր.
17. զպատկեր.
18. ընկալան ոմանք.
19. ներկին.
20. յԱստուածածնին.
21. որ ի հրոյն.

---

1. Օ. եւ դարձեալ տեսիլ ցուցաւ.
2. ընկալան.
3. ամբարիշտն.
4. պատկերին եւ զատանայի.
5. Ոսկեանն եւ Դանիէլ.
6. ընկալան.
7. պաշտելի.
8. եւս չփութան.
9. առաջաւորացն.
10. զի յիշատակ.
11. վկայեաց.
12. Ա. պատմութեան.
13. եղեւ.
14. որ կարգեաց.
15. Օ. ի.
16. Ա. Ագաթանգեղոս Բ. Ագաթանգեղ.
17. ի Սեղբեստրոսէ ի բժշկել.
18. եւ զայլ պահս.
19. Ա. զնինուացւոցն. Բ. զնինուէացւոցն.
20. լեզու.

զինքեանս հա[1] լինել, և մկրտին վասն ընչից, և զաղանդն իւրեանց ասեն նոցա. և նոքա, զի սիրողք չարի են՝ ճշմարիտ կարծեն լինել, թէ Սարգիս ումն արեստիւ հալաջ[2], աղանդ կախարդ[3], ազգաւ հայ, շուն ունէր և յուր[4] երթայն կամէր[5], շունն յառաջէր, և այս է նոցա առաջաւորաց պահն[6]. զոր ընդ շունս և ընդ գայլսն[7] եղիցի բաժին ասողացն: Այլ Սարգիս զաւրավարն յաւուրս Կոստանդիանոսի էր և Յուլիանոսէ հալածել ի Կապադովկիէ[8] եկն ի հայս առ Տիրան թագաւորն հայոց, և նա առ իւր ունել զանգիտեաց ի Յուլիանոսէ, գնաց ի պարս առ Շապուհ թագաւորն Պարսից, և նա պատուեաց և զաւրավար կարգեաց ընդդէմ տաճկաց, հանդերձ որդովն իւրով, զոր գերի վարեցաւ ի նոցանէ, և աղաւթիւք հաւրըն՝ նշանաւք և տեսլեամբ դարձաւ ի նոցանէ. որ և այս շնորհ եղև տուեալ սրբոյն, զի տակաւին աղաւթիւք նորա ազատին գերիք: Եւ զի զաւրավար և յաղթող[9] ցուցաւ ի պատերազմունս և յայտնի եղև քրիստոնէութիւն նորայ, և սորին աղագաւ կոչէր[10] Շապուհ, և ստիպէր զոհել կռոց, և նորա չառել յանձն՝ վկաեաց որդովն, որ անուանել կոչէր Մարտիրոս, յամսեանն յունվարի որ աւր Լ.Ա[11]. Եւ ոչ կա ի պատմութիւնն[12] յունաց, այլ յասորոց, և վասն այն նոցա անհաւատալի թուի, և թէ կամին և թարգմանեն՝ արգարև պատուեն[13] և նոքա տաւնեն. Պահքն առաջաւորացն[14] է և տաւնն Սարգսի զաւրավարի. և վասն այն պահքն Սարգսի կարծի[15], որպէս յառաջին շաբաթն յաղուհացսն անուանեալ պահքն շաբաթն աւրն Թէոդորոսի տաւնի, և շաբաթն նորա անուանի պահք. Յառաջագոյն յայն շաբաթն թագաւորացն տաւնէին՝ Կոստանդիանոսի և Տրդատայ, վասն Ն. աւրեայ նոցա պահոցն, և յետոյ Սարգսի վասն անդ պատահելոյն տաւնեցաւ[16]:

Այլ պանրուտէքն այսպէս կարգեցաւ. թագաւորն յունաց Զենոն մնասէր էր և բազմակեր, և յաւուրս բարեկենդանին բազմաճաշակ եղեալ ի միս և տաղտկացեալ՝ ի վաղիւն խղճիւ ուրէնս[1] կարգեաց, յայնմ[2] շաբաթ ոչ ուտել միս, և այդ սովորութիւն կալաւ. Այլ մատաղ առնել ի տաւնի հայոց[3] ոչ է հրաբար[4], այլ որպէս գրեալն է ի կանոնս. զի հրեքն[5] ընդ բաղարջի[6] և ընդ եղեգն ուտեն, և հաւատացեալք պարզաբար, զի չէ ինչ նման հաւատացելոց և հրէից տաւնեալն[7]. Եւ ոչ զանկակ ունել ի բուրուա(ռն)[8] և կամ[9] չունելըն հերձուած է, այլ որպէս ի քշոցն է՝ ազդ առնել միայն խորհրդական աղաւթիցն և ահաւոր առնել զժամ պատարագի[10] ի լսելիս, և զի խորհուրդ սերոբէից[11] սրբասացութիւնն[12] է, Այլ քահանայք և կրաւնաւորք զինուոր են Քրիստոսի, և զփիլոնն[13] և զվեղարն[14], որ ասի քուսիթա[15], որ է կուսի[16] պսակ՝ որպէս զէն զանձամբ ունին, և չէ պարտ անզէն լինել, Իսկ յոյնք և վիրք այպանեան[17] զբևեռ խաչի՝ յոյժ անգիտաբար ապաստամպեն[18], զի ասեն թէ զաստուածութիւնն խաչել ասեն հայք, և վասն այն է բևեռն. ԶԱստուած ասեմք խաչել՝ ո՛չ զԲանն, այլ զմարմինն աստուածացեալ Բանիւն. զի ոչ էր բաժանեալ Բանն ի մարմըն[19], որպէս ասաց Նեստոր, զի ուր մարդկաբէնն ասի՝ ո՛չ առանց Բանին, և ուր Բանն՝ ո՛չ առանց մարմնոյն. Այլ բևեռ խաչի խորհրդական է, որպէս գրեալ է ի կանոնս և որպէս առաքեալն Պետրոս մեկնէ՝ ուղիղ փայտն աստուածութեան Քրիստոսի է աւրինակ և խոտորնակն բնութեան մարդոյն, իսկ բևեռն դարձն և ապաշխարութիւն[20]:

(Շարունակելի)

---

1. հայ.
2. արուեստիւ հայան.
3. եւ կախարդ. Ա. օ. ազգաւ.
4. ուր.
5. Բ. օ. կամեր.
6. պահին.
7. գայլս.
8. հալածեալ ի Կապադովկիե.
9. Ա. յաղթող.
10. կոչե.
11. ջա. եր.
12. պատմութեանն.
13. անպատուելոց են Բ. պատոց են.
14. առաջաւորաց.
15. Ա. կարծեն.
16. անուանեցաւ.

---

1. Ա. որեն
2. յայն.
3. Օ. հայոց.
4. հրեաբար.
5. հրեայք.
6. ընդ բաղարջս
7. տօնելն.
8. Ա. ի բուրվառն. Բ ի բուրվառսն.
9. օ. կամ.
10. պատարագին.
11. Ա. սերոբեիցն. Բ. սերոբէիցն.
12. սրբասացութեան.
13. զփիլոն.
14. ա. զվեղար.
15. քուսիթայ.
16. կուսից.
17. զի այպանեն. (բ. այպնեն).
18. ամբաստանեն.
19. ի մարմնոյն.
20. ապաշխարութիւնն.